

Պրակը խմբագրված և սրբագրված է մեծ բարեխղճությամբ, թեև ապրդել են աննշան վրիպումներ:

Այս ոչ էական դիտողությունները չեն նսեմացնում գրքի անուրանալի արժանիքները, գիրքը, որն արձանագրությունների ընդգրկման լրիվությամբ, պատմական սպառնիչ մեկնարա-

նություններով, լեզվագիտական հանգամանալից վերլուծությամբ, գիտաքննական մեթոդի կիրառմամբ զգալի ներդրում է հայագիր վիմագրերի հավաքման ու հրատարակման բնագավառում:

Ս. Տ. ՍԱՂՈՒՄՅԱՆ

An Introduction to the Study of Classical Armenian by ROBERT GODEL, Wiesbaden, 1975.

ՌՈՐԵՐ ԳՈԴԵԼ, Դասական հայերենի ուսումնասիրողայն ներածություն, Վիսբադեն, 1975:

Օտարազգի հայագետների՝ վերջին տասնամյակներում լույս ընծայած երկասիրությունների մեջ ծանրակշիռ տեղ է գրավում Ռոբերտ Գոդելի «Դասական հայերենի ուսումնասիրության ներածություն» աշխատությունը: Հեղինակն իր ներածության հրապարակումն արդարացնում է այն բանով, որ Ա. Մեյեի «Դասական հայերենի համեմատական քերականության յուրվագիծ» աշխատության երկրորդ հրատարակությունից (1936 թ.) հետո դասական հայերենի հնչյունաբանական, ձևաբանական շատ հարցեր են վիճարկվել, վերանայվել, ուստի անհրաժեշտ էր մի նոր աշխատություն, որը նկատի ունենար վերջին տարիներս լույս տեսած ուսումնասիրությունները, ի մի բերեր դասական հայերենի քերականական այս կամ այն ճրկության մասին եղած կարծիքները:

Աշխատության «Առաջաբանը» թեև հակիրճ է, բայց բովանդակալից. այստեղ շարադրվում են քերականության բաժինների ընտրության, քերականական իրականությունները քննելու սկզբունքները:

Ռ. Գոդելը դասական հայերենը քննել է լեզվաբանական երկու՝ համաժամանակյա և պատմական հայեցակետերով և ըստ այդմ էլ գիրքը բաժանել է երկու մասի:

Առաջին մասում հեղինակը մի համառոտ ակնարկով ընթերցողին ծանոթացնում է հին հայերենի մեզ հասած բնագիր ու թարգմանական գրավոր աղբյուրներին, Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը, հայ ժողովրդի բանահյուսական հին նմուշներին ու լեզվական առումով նրանց անաղարտ լինել-չլինելու խնդրին, նախամեսրոպյան շրջանում ալգային լեզվով գրի ու գրականության հարցին: «Գրադարձություն», թե՛ տառադարձություն» գլխում գերադասություններ տրվում է գրադարձությանը, երբ գրավոր բնագրերի տառերն ու բառերը գրադարձվում են լատինական տառերով ու հնչյունա-

տարբերիչ նշաններով, ըստ դրանց գրության, և ոչ թե արտասանության, ի տարբերություն տառադարձության, երբ լատինական տառերով ու հնչյունատարբերիչ նշաններով գրի են առնում տվյալ լեզվի հնչյունները: Հեղինակը, քննադատելով Հ. Հյուբշմանի երբեմն մի հնչյունի դիմաց երկու նշան ($i = v || u$, $j = y || i$) հատկացնելու սկզբունքին, ընդունում է Ա. Մեյեի գրադարձության համակարգը, այն տարբերությամբ, սակայն, որ բառասկզբի նախդիրներն ու բառավերջի հոդերը բառից անջատում է դժիկով (z-amenayn, hogwov-n, y-anapat-n):

Վերլուծելով հայերենի ձայնավորական համակարգը, Ռ. Գոդելը գտնում է, որ ե/է հակադրությունը հատուկ է եղել նախահայերեն շրջանին: Դասական շրջանում երկար է-ի և կարճ ե-ի հակադրություն չի եղել, թեև գիտակցվել է դրանց բաց և փակ հնչյուն լինելու հանգամանքը: Համեմատյալ ղեպս, X դարում այդ երկու հնչյունները նույնանում են, բացառությամբ բառասկզբի: Այ-ը արմատական բաղաձայնից առաջ վերածվել է երկար, բաց օ-ի:

Նշելով, որ լ և ղ հնչյուններ են եղել, Ռ. Գոդելը սահմանում է դրանց գործածության սահմանները. լ-ն հանդիպում է բառասկզբում (լեառն, լսեմ) և յ-ից հետո, իսկ ղ-ն՝ բաղաձայններից սուռք (ողջոյն, փաղց): Կարծում ենք, որ կիրառության սահմանները թերի են. բառասկզբում լ-ից բացի ունենք նաև ո-ով սկսվող բառեր (ղենջակ, ղակիշ, ղօղանջ ևն):

Աշխատության մեջ համեմատաբար զգալի տեղ է հատկացված վանկային կառուցվածքին: Ընդունված կաղապարներ են դիտված (բաղաձայն)-ձայնավոր՝ (Բ)Ձ, (Բ)ՁԲ, ինչպես նաև (Բ)ՁԲԲ: Յուրյց լ տրված հորանջի դերը վանկատման գործում:

Ձայնավորների կանոնավոր հերթագայությանը Ռ. Գոդելն անդրադառնում է նախավորին չափ մանրամասն, որքան թույլ են տալիս

նման մի աշխատության սահմանները, վերլուծում է վերջնահանդեպի և ոչ վերջնահանդեպի, ու, իսկ, է, ոչ, եա, ե հնչյունները, բերում գոյականների հոլովումներից և բայական խոնարհումներից առաջացած ձայնդարձի ցայտուն օրինակներ: Բաղաձայնական կուտակումները ներկայացվում են իրեն լեզվի պատմական զարգացման, ինչպես նաև հոգնակի թվի ուղղական և հայցական հոլովների կազմության, հոգների ավելացման արդյունք: Ցույց են տրվում բառերի վանկատման վրա ազդող ստուգաբանական, բառակազմական, բաղաձայնների կուտակման, հոգնակիացման ու հոլովման գործոնները: Դասական հայերենը, հեղինակի համոզմամբ, կրկնակ բաղաձայններ չունի, բացի

միաժամանակ. ձկան (*ձուկան), դստեր (*դուստեր), լերին (*լեարին):

Անփոփոխ հիմքային թեքման են ենթարկվում -2(Բ), բացառիկ դեպքերում նաև -2Բ ունեցող բառերը: Ռ. Գոգելն ընդունելով հանդերձ դասական հայերենի գոյականական հոլովման համակարգի՝ Ա. Բագրատունու և այլոց դասադրերում կամ ձեռնարկներում ընդունված խմբավորումը, առաջարկում է դրանից զղալապես տարբերվող մի այլ դասակարգում, ուր նկատի են առնվում ոչ միայն սեռականի հոլովական վերջավորությունները, այլ սեռականի և գործիականի՝ միասին վերցրած: Ըստ այդմ, Ռ. Գոգելն ընդունում է հինգ հոլովում՝ վեցերորդ տարբերակով.

	I (-ո-)	IIa (-ա-)	IIb (-ա-)	III (-ի-)	IV (-ու-)	V (-ս/ա-)	
եզ. Ուշ	երգ	Հայկ	լեզու	ծառայ	գահ	ՈՒՆ	այգի
ՍՏ	երգ-ոյ	Հայկ-այ	լեզու-ի	ծառայ-ի	գահ-ու	Ն	այգ-ու
Բ	երգ-ոյ	Հայկ-այ	լեզու-է	ծառայ-է	գահ-է	ՍՏԲ	այգ-ոյ
Գ	երգ-ով	Հայկ-աւ	լեզու-աւ	ծառայ-իւ	գահ-ու	Գ	այգ-աւ
հոգ. ՍՏԲ	երգ-ոց		լեզու-աց	ծառայ-ից	գահ-ուց	հոգն. ՍՏԲ	այգ-աց

նն-ից (իննեռոդ) և բռ-ից (մբռիկ): Ինչ վերաբերում է կացքես, լցքէ և նման բառերին, ապա դրանք, ըստ Ռ. Գոգելի, ընթերցվել են կացքես, լցքէ:

Երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է ձևաբանությանը՝ մասնավորապես հոլովմանն ու խոնարհմանը: Ռ. Գոգելը հատուկ նպատակադրությամբ գոյականի, ածականի, թվականի, դերանվան կամ բայի թեքման տախտակներ չի բերում. նա ոչ թե դասակարգում է քերականական թեքման ձևերը, այլ քննում, վերլուծում է համակարգը:

Ձ, ի/յ նախդիրները դիտված են իրեն հայցական, բացառական և ներգոյական հոլովածների բաղկացուցիչ տարր: Հայցականն առանց զ-ի կարող է օգտագործվել, երբ անորոշ ուղիղ խնդիր է (եկն կին մի, որ ունէր շիշ իւղոյ նարդեան), երբ հարադիր բայի մաս է (պատասխանի տամ, ակն ունիմ) և երբ ցույց է տալիս ժամանակի տեղություն (աւուրս քառասուն):

Պաշտպանելով Ա. Մեյեի կարծիքը հոլովման փոփոխական և անփոփոխ հիմքերի մասին, Ռ. Գոգելը դասական հայերենի գոյականների թվի մեջ տեսնում է հնդեվրոպական նախալեզվի ձայնդարձի արխատիկ մի հատկանիշի հիմքային տարբերակ: Քերականական ձևային ավելացումը թեև իր հետ բերում է շեշտի փոփոխություն, բայց դա հոլովման հետ ոչ մի առնչություն չունի: Ձուկն, դուստր, լեառն և այլ բառերը հոլովելիս հիմքային տարբերակն ու կանոնավոր ձայնդարձը դործում են

Ռ. Գոգելը ցույց է տալիս որոշակի իմաստ արտահայտող կամ որոշակի վերջավորություն ունեցող բառերի պատկանելիությունը այս կամ այն հոլովման, միաժամանակ ընդգծելով, որ երբեմն նույն բառը կարող է պատկանել ոչ թե մեկ, այլ երկու (կոյս, առու). նույնիսկ երբ հոլովման (աւր, հեր):

Բառերի մի այլ խումբ հոլովման վերոհիշյալ համակարգին չի պատկանում: Ռ. Գոգելը այս խմբի մեջ է ներառում ներքին թեքման, ինչպես նաև խառն հոլովման ենթարկվող բառերը: Ըստ այդմ, բառերի մի խումբ ունենում է երկու հիմք. մեկը եզակի թվի ուղղական ձևավորը (եգր, դուստր, կողմն), մյուսը՝ այդ բառերի սեռական հոլովաձևը, որը նաև հոգնակի ուղղականի համար հիմք է ծառայում (եգր-հ, դստեր-հ, կողման-հ): Բառերի մի երրորդ խումբ ունենում է երեք հիմք. մեկը նույն եզակի թվի ուղղական հոլովաձևը (ակն, ձուկն,

1 Նախորդ դասակարգումների մասնակի թերիությունը պահանջ է առաջացրել վերանայել գոյականական հոլովման տեսակները խմբավորելու ելակետերը, և ակադ. Գ. Ջահուկյանն իր «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» գրքում (Երևան, 1959, էջ 95—122) կատարում է Ռ. Գոգելի առաջարկած խմբավորմանը շատ նման դասակարգում՝ նշելով բառերի այս կամ այն հոլովմանը պատկանելու իմաստային, բառակազմական և այլ առանձնահատկությունները:

ծաղիկ), երկրորդը՝ դրանց սեռական հոլովածներ (ական, ձկան, ծաղկան), իսկ երրորդը՝ դրանց հոգնակի ձևը (ակուն-ք, ձկուն-ք, ծաղկուն-ք):

Հեղինակն անդրադառնում է դերանվանական հոլովման ձևերին ու առանձնահատկություններին:

Շոշափվող հաջորդ թվաներն են. բայի եղանակները, ժամանակները, դերբայները: Բայական ամեն մի ձև պատկանում է կա՛մ ներկայի, կա՛մ անցյալ կատարյալի հիմքին: Բայական թեքման ժամանակ ի հայտ է գալիս այսպիսի մի առանձնահատկություն.

ա. կարճ ձև ունեցող բայի ներկան ունենում է անցյալ կատարյալի երկար հիմք. փորձ-եմ/փորձ-եց-ի, հայ-իմ/հայ-եց-այ.

բ. երկար ձև ունեցող բայի անցյալ կատարյալը ունենում է կարճ հիմք. պագ-ան-եմ/պագ-ի, հեծ-ան-եմ/հեծ-այ.

գ. երկար ձև ունեցող բայի անցյալ կատարյալը ունենում է երկար հիմք. մոռ-ան-ամ/մոռ-աց-այ:

Այս հակադրությունը վերանում է, երբ պարզ ներկան զուգադրվում է արմատական անցյալ կատարյալի հետ. հան-եմ/հան-ի, նստ-իմ/նստ-այ:

Հաջորդ էջերում հեղինակը քննում է բոլոր եղանակների ժամանակների կազմության ձևերն ու վերջավորությունները:

Կրավորական և ներդործական սեռերի իմաստները բոլոր բայերը չեն կարող արտահայտել: Ընդ որում, ոչ բոլոր ժամանակները կարող են ցույց տալ սեռերի հակադրություն (օրինակ՝ անցյալ անկատարը): Մյուս լծորդության բայերը հասարակ սեռի են՝ արտահայտում են և՛ ներդործականի, և՛ կրավորականի իմաստ: Սեռի փոփոխությունը երբեմն արտահայտվում է բայածևի փոփոխությամբ (հեղու-հեղանի) կամ բայի բաղադրյալ ձևով (բերեալ լինէի): Այնուհետև քննվում են բայերի կանոնավոր և անկանոն խոնարհման հարցը, պատճառներն ու ձևերը:

Բառակազմությունը գրախոսվող աշխատության մեջ դիտվում է իբրև ձևաբանական մակարդակ, որն արտացոլում է լեզվի նախաձեռն: Բառակազմական երևույթները քննելու համար Ռ. Գոգելը թեև վերցրել է Ղուկասի և Հովհաննեսի Ավետարաններից փոքրիկ հատվածներ, բայց այդ հատվածների ընձեռած տվյալների հիման վրա արված եզրակացությունն ըստ ամենայնի տալիս է դասական հայերենի բառակազմական իրականությունների ճիշտ պատկերը:

Ածանցավոր բառերը հիմնականում այստեղ քառանված են «բայականների» և «գոյականա-

կանների»՝ ըստ այն բանի, թե ածանցվող բառի հիմքը բայ է, թե՞ գոյական:

Աշխատության երկրորդ մասում դասական հայերենը քննվում է պատմական հայեցակետով: Հեղինակը մ. թ. ա. 1500 թ. մինչև մեր թվարկության 400 թ. ընկած շրջանի հայերենը կոչում է նախահայերեն: Դասական հայերենի արխայիկ ձևերը, ըստ Ռ. Գոգելի, հարուստ նյութ կարող են տալ հնդեվրոպական նախալեզվի բառային և բառակազմական երևույթները վերականգնելու համար: Բերվում են հնդեվրոպական նախալեզվից դասական հայերենին անցած ածանցներից մի քանիսը. *iyo, ā > -ի (գործի), *-ikya > -իչ (մառնիչ), *-omno- > -ուն (շարժուն), *-mon/mn- > -մե||մուն (շեմմե) և այլն: Ռ. Գոգելը պահանջում է, որ ամեն մի ստուգաբանություն հիմնված լինի հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունների վրա (4.314), թեև, հեղինակի կարծիքով, այդ պահանջը հազվադեպ է կատարվում: Ընդարձակ հատվածներ են նվիրված հնդեվրոպական նախալեզվի բաղադրյալների, ձայնավորների հայերեն արտացոլումներին: Համեմատական լեզվաբանության միջոցով բացահայտված հնչյունական օրենքներին վերաբերող բազմաթիվ օրինակներ են բերված, որով Ռ. Գոգելի դրույթները դառնում են առավել համոզիչ:

Գրախոսվող աշխատության մեջ ցույց է տրված շեշտափոխության կատարած դերը. հնդեվրոպական նախալեզվում բառաշեշտի թուլացման պատճառով վերջին վանկն ընկնում է. *esmi > եմ, *ebheret > եբեր, *mrtos > մարդ մի երևույթ, որը նկատվում է նաև լատիներենում. *animali > animal, *dōtis > dōs:

*W հայերենում վերածվում է գ-ի (*wai-lo- > զայլ): Այն կարող է վերանալ հայերեն համապատասխան բառերի մեջ *snēw- > ցնեալ, *grāwen > երկան, *énw > ինն: Վերջին երևույթը, ըստ Ռ. Գոգելի, տեղի է ունեցել նախահայերենի մի հեռավոր շրջանում, որը նախորդել է շեշտափոխությանը (4.353):

Քննության են առնվել *t > f, *d > ք, *sw > ք- փոփոխությունները: Ռ. Գոգելն ընդունում է, որ հնդեվրոպական նախալեզվի համակարգն ունեցել է վեց ձայնավոր՝ զանց առած ձայնավորների տեղության հանդամանքը:

«Պատմական ձևաբանություն» ենթադրում ուսումնասիրության առարկա են դարձել գոյականի հոլովական և բայի խոնարհման հնդեվրոպական հիմքերը, ի և ու հոլովման զարգացման ընթացքը: Ն հիմքով գոյականները բաժանվում են երկու խմբի (I. գառն-զառին, II. սիւն-սեւան): Հեղինակի կարծիքով, դասական հայերենում պահպանվել է նաև թեք-

ման մի երրորդ ձև, որին հատուկ է *-en/on- ձայնդարձը: Ռ. Գոգելն ուսումնասիրության նյութ է դարձրել դասական հայերենի հոլովական առանձին վերջավորություններ (բաց. է, սեռ. ց), դերանվանական հոլովման հիմքերը, վերջիններիս՝ հնդեվրոպական նախալեզվի հետ ունեցած ընդհանրությունները, բայական համակարգը (կերպ, սեռ, ժամանակ, հիմք և այլն):

Որքան էլ հսկայական աշխատանք է կատարված հայերենի հնչյունաբանական, քերականական առանձնահատկությունները, հնդեվրոպական լեզվաընտանիքի հետ նրա ունեցած առնչակցությունն ու այդ լեզվաընտանիքի մեջ հայերենի գրաված գիրքը ուսումնասիրելու բնագավառում, նկատի ունենալով և անցյալի, և՛ ներկայի նվաճումները, Ռ. Գոգելը հանդում է այն եզրակացության, որ «արդյոք սա բավական է հատկացնելու հայերենին միջանկյալ մի դիրք, մի հարց, որը կարծես երբեք բարձրացված չի էլ եղել» (էջ 131, § 6. 3): Նկուզեինք այս աշխատության վերաբերյալ անել մի քանի դիտողություն.

1. Հեղինակի շարադրանքից զգացվում է, որ նա որոշ չափով թերագնահատում է V դարի հայ մատենագրության մեջ ինքնուրույն գրականության դերն ու նրա հարաբերակցությունը թարգմանական գրականության հետ (տե՛ս էջ 1, § 1—1.2):

2. Թեև մինչև 1975 թ.՝ Ռ. Գոգելի գրախոսվող գրքի լույսընծայումը, բավական հարուստ գրականություն է հրապարակ իջել դասական հայերենի քերականական տարբեր իրակությունների վերաբերյալ (նկատի ունենք հատկապես Գ. Զահուկյանի ու է. Աղայանի աշխատությունները), սակայն Ռ. Գոգելն օգտագործել է միայն պրոֆ. Ա. Աբրահամյանի «Գրարի ձևոնարկը» (Երևան, 1964): Հայաստանում յուրա տեսած գրաբարագիտական երկերը կարող էին գոնե մասամբ պատասխանել այն

հարցերի ճշող մեծամասնությանը, որ առաջ է քաշել Ռ. Գոգելը:

3. Ցանկալի չէր, որ Ա. Մեյեի անունը շոշափվեր միայն այն հատվածներում, ուր գրախոսվող աշխատության հեղինակը հակադրվում է մեծ լեզվաբանին ու հայագետին:

4. Փոքր-ինչ պարզեցված է թվում Ռ. Գոգելի այն պնդումը, թե հնդեվրոպական մեռած կենդանի լեզուները հնդեվրոպական նախալեզվի հետնորդներն են ճիշտ այնպես, ինչպես ուղեմանական լեզուները լատիներենի տարբեր զարգացումներն են» (էջ 4): Հնդեվրոպական նախալեզվից առաջացած լեզուները անցել են առաջացման կամ զարգացման այլ ուղիներ, այլ են եղել նրանց ձևավորման ու զարգացման պատմական պայմանները:

Ռ. Գոգելի «Դասական հայերենի ուսումնասիրության ներածությունը» վերջին ժամանակներս ստեղծված հայերենագիտական նոր և հաջողված խոսք է: Այստեղ կա նյութին մոտենալու և հարցեր լուծելու ուրույն միտում: Ռ. Գոգելը գնահատում է ոչ միայն հին սերնդին պատկանող հայագետների, այլև արտասահմանյան ժամանակակից հայագետների (Մ. Գրամմոն, Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Պեդերսոն, է. Բենվենիստ, Զ. Բոլոնիեզի, Ֆ. Ֆեյդի, Հ. Ենսեն, Ս. Մանն, Վ. Պիդանի, Հ. Ֆոգտ, Վ. Ուինտեր, Պ. Յունգման, Ս. Լիոնեն, Կ. Շմիդտ ևն աշխատությունները: Նվ դա ավելի է բարձրացնում Ռ. Գոգելի աշխատության գիտական արժեքը: Ռ. Գոգելի աշխատության մի կարևոր արժեքը ևս. նա փաստերը քաղում է ոչ միայն տպագիր գրքերից, այլև ձեռագիր մատյաններից և, անգամ, վիմագիր արձանագրություններից:

Ցանկալի է ունենալ այս աշխատության հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը:

Բաճախ. գիտ. թեկնածու Ա. Ս. ԶԵՅՆՈՒՆՅԱՆ